տուռք եւ զարմանաչէն խորանք, որոց երկրպագեալ երկրամած՝ դարձաք ի տուն: 90

Ս· ԾՆՆԴԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Եւ այլ օր գնացաք ի վանք մի բարձր լերան վրայ, որ ելք աստիճանաց երկու հարիւր էր· եւ ի գլուխքն կային երկու մատակք ոսկեծք ի վիմէ, որոց բերանոց ջուր բխէր· եւ մտեալ ի ներս յոլով շրջեցաք: Որ եւ սա 95 զարմանալի չէնք էր· ունէր քառասուն սիւն: Եւ կայր դմպէթ մի փոքր չորս սեան վրայ· եւ ներսն սաֆի վարախ ոսկի եւ լազվարդ աննման յօրինած· եւ գերեզման մի բարձր սօմախի· եւ հարցաք թէ ո՞ւմ է· ասին թէ 100 Հեղինէի մօրն Կոստանդիանոսի, որ զխաչափայտն եգիտ· եւ երկրպագեալ ողջունեցաք եւ դարձաք ի տուն: Եւ ասին թէ այս եկեղեցիս առաջ է եւ հին քան զամենայն· եւ կոչէր Ծնունդ եկեղեցին այն· եւ աստի են հաբեղայք ի Ծնունդն Քրիստոսի յԵրուսաղէմ եւ ի Բէթղէհէմ: 105

Եւ աջ կողմն եկեղեցուն էր սարայ մի· եւ ասին թէ աստ նստի պարոնն որ էր տէր քաղքին եւ Փափին վաքիլ, որ զամենայն մարմնաւոր զատն նա զատէ, զշնացողս, զզողս եւ զայլն· զի Փափն արիւն հեղուլ չի տար: Եւ այլ առաջ տեսաք երկու վիշապանման հսկայս ի մեծ վիմէ· որ ունէին մի մի ամեհի ձիս· 110

89 յորոց: